


ՊԱՅՄԱՆՔ

Յարեկան գին Կ. Պոլսոյ համ. 10 ՄԷՃ.
Գաւառաց 2 խորս
Վեցամս. Կ. Պոլսոյ 5 ՄԷՃ.
Գաւառաց 1 խորս
Ստոր երկրորդ 50 խոր.
Մանուցման տողը մէկ անգամի հա.
մար 3 զուրուշ, երկու անգամի հա.
մար 2 զուշ 5. աւելի անգամներու
համար գատ ստիպարի թիւն կըլ-
այ :
Խրաքանչիւր թիւ 40 վարաւ արծ :



ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱՁՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Կուրս 4 անգամ լրացաւ ծախքը
ծախքը թմբադրութեան վրայ է :
Լրացաւ զեւրաքեւեայ նամակ
կամ որ և իցէ պրտի թմբադրութե
— Տնօրէնին պիտի ուղարկուի Կ. Պոլս.
Թիւ Ստորեքսար շատակի թիւ
198, Կորս խան, Մասիսի դրամներ :
Ետեւ :
Ճանաչու ծախքը չվճարուած
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ, յողուած, եւ
եւ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 7 ԳԵԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ.

Որեւելեան Բրիտանիայի պաշտպան
հանդիսացող Ռուսիոյ տէրութեան Հա-
յոց նկատմամբ բռնած աշխարհափա-
րութեան վրայ Անգլիական վերջին
կապույտ տեսարանի հետաքրքրութեան
արժանի գրութիւն մը կը պարունակէ,
կարճոյ Անգլիական հիւպատոսին
թարգմանին (որ բնիկ Ռուսիայի Հայ
միջ եղեր) կողմէ ներկայացած, որոյ
մէջ նկարագրուած են այն ամեն մի-
ջոյններն, որովք Ռուսիա իւր երկրին
մէջ մէկ ու կէս միլիոն Հայերն հե-
տըզհետէ փնտցեալու կ'աշխատի, և
արդէն յաջողած է եղեր կէս միլիոն
Հայազգի կ'ընել Հետեւաբար Ռուսիոյ
Հայոց, և կրնամք յարել թէ քուր-
քիոյ Հայք ևս այս մասին միեւնոյն
զգացումն ունին, դժգոհութիւնն ու
գանդաւորները մեծ են, զորս վերո-
յիշեալ աեղեկագիրն երեք տեսակ կը
նկարագրէ : Նախ Հայոց դժգոհու-
թիւնը Ռուսիոյ մէջ Հայաստանեայց
եկեղեցւոյ իրաւանց և արտօնութե-
անց դէմ ուղղուած բռնադատու-
թեանց համար է, որոյ վրայ արդէն
Թուրքիոյ Հայք բողոքած էին՝ Յով-
հաննէս Կաթողիկոսին ակարութենէն
ձեռք բերուած Պալատէնիա անուն
կրօնական պայմանագրութիւնը մեր-
ժեալով : Վեհ. Կաթողիկոսն այս մա-
սին 1873ին կայսեր նամակ մը զրկած
էր, որով կը գանգատէր թէ Հայաս-
տանեայց եկեղեցւոյ զիւրոյն իրա-
ւունքն ու արտօնութիւնները Ռուսիոյ
մէջ թաթարաց, Օսմանեանց և Պալ-
սիոյ ժամանակէն աւելի նուազ են.
Թէ խաւով Հայոց լեզուն, կրօնքն ու
գոյրոյնները կը յարգէին, և Հայք
անոնց իշխանութեան ներքեւ աւելի
եկեղեցական ինքնիշխանութիւն ու-
նէին :

Երկրորդ՝ Էյիպանի Կաթողիկո-
սը պարտաւորեալ է 14 կամ 17 յօդ-
ածէ բաղկացեալ երգում մը տա-
լու, որով յանձն կառնու Չարին ա-
մեն կամաց հնազանդել : Ս. յայէս
Ռուսիա Հայոց հոգեւորական գլուխը
չղթայակալ կաշկանդած է բարոյա-
պէս, և անոր ամեն գործերը, կոն-
գրանքները, ձեռնագրութիւններն իսկ
կոփկասեան փոխարքային Բրօքու-
րօրին և մանր լրտեսներու կողմէն
անգամ ընտելութեան կ'ենթարկին :

Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարքարա-
նին տուած իւրի խաղէրներուն վը-
րայ թաղերու իմաններուն կողմէն
կնիք մը դրուելու համար մօտերս
ստորին պաշտօնատարաց ոմանց ձեռք
տուած միջոցն Հայոց կարծիքը բա-
ւական յուզած էր. բայց ի՞նչ պիտի
բաւերէր եթէ Ս. Պատրիարքին քով

մնայուն իմամ մը գրուէր Բրօքուր-
ոյ տխուրոտով, անոր ամեն մէկ գոր-
ծողութիւններն աչքէ անցունելու
համար :

Երրորդ՝ Հայերը Ռուսացընե-
լու նպատակաւ հաստատուած օրի-
նաց և հրահանգաց արգելափակ, յայս-
կոյս կոփկասու բնակեալ Հայազգիք,
Գրքմի և Աթոքիստանի Հայք, որք թա-
թարաց ժամանակ ծաղկեալ վիճակ
մ'ունէին, հիմայ գրեթէ բոլորովին
Ռուսացած են : Իրենց առաջնորդնե-
րը Ռուսիոյ ծառայելով վարձք կ'առ-
նուն տէրութեանէն. ո՛չ վեհ. Կաթո-
ղիկոսը, ո՛չ ալ ժողովուրդն աղղե-
ցութիւն ունին անոնց վրայ, քանզի
չեն կրնար պաշտօնանկ ընել զանոնք :
Կոփկասու մէջ ալ Ռուսիա նոյն աշ-
խարհափարութիւնն առաջ կը տանի-
արդէն Թիֆլիզի մէջ երեք չորս հա-
զար ընտանիք կրնան դառնուիլ որք
Հայութենէ հեռացած են, և այսօր
ըստ ամենայնի Ռուս են : Ս. յալ-
տակաւ ի գործ դրուած միջոցնե-
րուն զիւստըններն են, նախ աշխու-
թեան դպրոցներն, որոց մէջ տարին
վեց եօթն հազար աշակերտք կ'ըն-
դունուին, և յորոց ո՛չ միայն Հայոց
լեզուն, Հայաստանի աշխարհագրու-
թիւնն ու պատմութիւնն արտաք-
սուած են, այլ և դաւանութիւնն
անգամ Ռուսաց լեզուով կ'աւան-
դուի : Ա. յս նկատմամբ Հայերը Բոլո-
նիայիներուն համահաստար եղած
են : Երկրորդ միջոցն է խառն ամուս-
նութիւններն, որոց համար դրուած
օրինաց համեմատ թէ՛ Հայ մը Ռուս
կին առնու, թէ՛ Ռուս մը Հայ կին,
զաւակունք միշտ Ռուս կը լինին : Բայց
չստ անգամ Հայ օրիորդք Ռուս ըս-
պայից փայտուն համազգեստէն շա-
ցած, անոնց հետ կ'ամուսնանան, օ-
ժիտ տանելով իրենց հայրենական
ժառանգութեան մեծ մասին հետ
նաեւ իրենց ազգութիւնն : Երրորդ
Հայ զինուորական և քաղաքային պաշ-
տօնատարք՝ զխառն ստորին աստի-
ճաններու և պաշտօններու մէջ կը
պահուին, և հետեւաբար ասոնցմէ
չտաներն յառաջանալու համար իրենց
ազգութիւնը թողնով Ռուս կը լինին :
Ասկէց կրնայ տեսնուիլ նաեւ թէ այն
բարձրաստիճան Հայ զօրավարք, որք
պարզամտաց ոմանց աչքը կրնան շը-
լացընել, ի մանկութենէ իւր Ռուս
մեծցած են : Եւ որպէսզի Հայութիւնը
լուսաւորութեան կեդրոններ չունե-
նայ, Ռուսիա Լազարեանց ճեմարա-
նին վերին վարչութիւնն յափշտա-
կեր, և խաղիպեան ուսումնարանը
գոյրէ է : Վերջապէս իւր թէ այս
ամեն փնտասկար միջամտութիւնք
բաւական չէին, Ռուսք կը թշնամա-
նեն եղեր նաեւ զՀայս Արմիաշքա
(գնչու) և Եւտիքեան կոչելով դա-
նունք : Ահաւասիկ Արեւելեան քրիս-
տոնեայ ազգի մը նկատմամբ Ռուսի-

ոյ ըրած նիւթական և բարոյական
հարստահարութիւններն, որք քա-
ղաքակիրթ աշխարհի ուշադրութեան
արժանի են :

Մեր երէկուան թուով Պ. Կլա-
տրութիւն մէկ բանաստեղծեան մէջէն
Թուրքիոյ վերաբերեալ մաս մը հա-
մառօտեցինք : Անգլիական նախորդ-
առաջին նախարարն իւր մէկ ուրիշ
բանաստեղծեան մէջ գարձեալ
Թուրքիոյ վրայ խօսելով՝ հարցուց
թէ ո՞վ է այն աշխուրթիւն, որ Պալ-
քանայ անուան տակ ճանչուած հա-
րուտ և բերրի երկիրներուն վրայ
պարտի իշխել : Ժամն հնչելու վրայ
է, ըստ, երբ Թուրք իշխանութիւ-
նը պիտի դադրի, և Թուրքիոյ այս
ժառանգութիւնն ոչ Ռուսիոյ ձեռ-
քը պէտք է անցնի, ոչ ալ Աւստրիոյ
կամ Անգլիոյ. այլ պէտք է այդ տե-
ղերը բնակող ժողովրդոց ձեռքը վը-
նայ : Պ. Կլատրութիւն, Արեւելեան Ռու-
մէլի օրէնագրական ժողովոյն նիս-
տերն սկսելուն, ինչպէս նաեւ այն
առթիւ արուած կոչումներն վրայ խօ-
սելով, յիշեց թէ Թուրք հպատակ
մը Սալթանին լուծակ մ'առաջար-
կեց՝ Արեւելեան Ռումէլի բնակչաց
այսպիսի դուր թիւն մը շնորհած լի-
նելուն առթիւ անոր երախտագի-
տութիւն յայտնելու համար :

Ահա, յարեց Պ. Կլատրութիւն, յա-
ռադիւմութեան ճշմարիտ ապացոյցն :
Ստեղծարար Միթիկին բաղձանաց
համաձայն կարծիք յայտնած կը հա-
մարի զինք՝ խնդրելով որ այդ ժո-
ղովրդք ոչ ևս բռնապետական տէ-
րութեան միջխառնութեան ներքեւ
լինան : Արթնութիւն պէտք է ոչ մի-
այն Ռուսիոյ՝ այլ և Աւստրիոյ նկատ-
մամբ, որ թիւեան Ռուսիոյ դերիշխա-
նութեան տեղ իւր գերիշխանութիւ-
նը անցունելու փափաքող է : Պ. Կլա-
տրութիւն կը պնդէ սա կէտին վրայ
թէ Անգլիական կառավարութիւնն
Օսմանեան իշխանութեան ազատեալ
գաւառաց մէջ հաստատուած ա-
ղատ դրութիւնները պէտք է նպաս-
տաւորէ, որպէս զի երբոր այդ եր-
կիրն իւր հին բարգաւաճ վիճակը
ձեռք բերէ, Անգլիոյ անունն յիշէ
իրեւ այդ մասին աշխատակցած տե-
րութիւն մը :

Եւրոպական լրագիրք չեն դադ-
րիլ Թուրք-Ռուսական դաշնակցու-
թեան կամ գոնէ համաձայնութեան
խօսք ընելէ : Զրոյցներ կան այս մա-
սին որ աւելի դրական են, քան ու-
րիշ կարգ մը զրոյցներ, որք թէսկան
վիճակի մէջ կը ներկայացնեն գոր-
ծը : Բնդհանրապէս սա համազումը
կը տրիէ թէ Օսմանեան արդի նա-
խարարութեան երկու գլխաւոր ան-
դամներէն Մահմետ Նէտիմ փաշան
ամեն ջանք կ'ընէ Անգլիոյ մերձեւա-

լու և անոր Կ. Պոլսոյ ներկայացուց-
չին հաճոյ երևնալու : Իսկ Սայիտ փա-
շան Մահմետ Նէտիմ փաշայէն ա-
ւելի « վտանգաւոր թշնամի » մը կը
նկատուի Անգլիական ազգեցոյթն ան-
բայց կըսուի թէ Անգլիոյ վերջերս
բռնած իրաւ ընթացքն Օսմանեան
նախարարութիւնը Ռուսիոյ մօտե-
նալու ստիպած է, և թէպէտ դաշ-
նագրութիւն մը չէ կնքուած, այսու
ամենայնիւ Բ. Գրան և Կ. Պոլսոյ
Ռուսական դեսպանատան միջեւ որո-
շումներ եղած են, որոց համե-
մատ Օսմանեան կառավարութիւնը
նախատեսեալ ինչ ինչ պատահակա-
նութեանց մէջ Անգլիոյ խօսքին չը
պիտի հետեւի, այլ Ռուսիոյ հետ հա-
մախորհուրդ պիտի դործէ :

ՊՅՅՄԱՆԱԳԻՐ

(Գր. Կ. Բ. 2493)

ՅՕԴ. 11. — Եթէ տասն տարին
լրանալուն, այսինքն 1890 յունիս 1 ին
նախընթաց 8 յօդուածին մէջ նշա-
նակեալ առեւտրիքները գլխով և առ-
կոտով վճարուած չլինին, ներկայ
պայմանագրին ամեն պայմաններն
անեղծ կը մնան և կը շարունակին
գործադրիլ մինչև որ յիշեալ պա-
հաններն ամբողջապէս վճարուին :
Ի բաց առեալ վարձակալութեան
զինն, որ վերջին տարւոյն համար
չորս հարկերուն զուտ հասցիլին հի-
ման վրայ պիտի հաստատուի :

ՅՕԴ. 12. — Ներկայ պայմանագրին
ամեն պայմաններն և զիւստ սրապէս
անոնք՝ որ չորս հարկերուն վարձ-
ման, աղի և ծխոխոտի մեղափոխա-
ւին վարչութեան և անոնց տար լին-
քը կայսերական կառավարութեան
պարտած դուրաններուն վճարման կը
վերաբերին, ըստ 8 յօդուածին, ան-
դառնալի և անփոփոխելի են, ի
բաց առեալ յետագայ 13 յօդուա-
ծին մէջ նախատեսեալ պարագայն,
և չեն կրնար փոփոխիլ կամ դադրիլ
ինչ պատճառաւ և ինչ պարագայն
մէջ որ լինի :

Սոյն բացորոշ պայմաններ նկատելով
և ներկայ պայմանագրին զօրու-
թեամբ, անուղղակի հարկաց ընդ-
հանուր վարչութեան այն հասցիլի-
ներն, որ ներկայ կարողաւրութեան
գուրս են, 1880 յունիս 1էն սկս-
եալ ամբողջապէս պիտի ազատուին և
կայսերական կառավարութեան մնան :

1878 յուլ. 20 (2 դեկտ.) թուա-
կանի պայմանագրով 1,660,000 իրաւ-
քի փոխառուութիւնը կնքուեալը
խօսք կուտան 1880 յունիս 1/13ին
Օսմ. կայսերական Պանքային յանձ-
նել երկու կողմէ կնքուած և կան-
խաւ գանձէն ստուգուած ծրարնե-
րով այն ամեն փոխանակողներն
որք մաքրատանց և անուղղակի հար-
կաց ընդհանուր անօրէնութեան կողմ-

մէ տրուած են : Այն փոխանակա-
գիրք ներկայ պայմանագրին համե-
մատ 8 յօդուածին մէջ նշանակեալ
4,800,000 լիւրային հետեւեալ համե-
մատարար վճարուած միջոցին պիտի
ազատին և կայսերական կառավա-
րութեան յանձնուին յիշեալ Պան-
քային կողմէ : Ի ներկայութեան եր-
կուց կողմանց և ըստ չափու համե-
մատութեան մէջ մի վճարման :

Օրմ. կայսերական Պանքան նմա-
նապէս պարտական պիտի լինի նոյն
թուականին կայսերական կառավա-
րութեան դարձեալ միացեալ մեծ
փոխտուութեանց դրամի համար
իրեն յանձնուած թղթադրամներն ,
որպէս զի ոչնչանան ու այլին :

ՅՕԴ. 13. — Կայսերական կառա-
վարութիւնը՝ նախընթաց յօդուածին
տրամադրութեանց զարտուղելով՝ ի-
րաւունք կը վերապահէ իրեն՝ տասն
տարին լրանալէ առաջ վերջ տալ ներ-
կայ պայմանագրին , հետեւեալ երկու
հալան և անհրաժեշտ պայմաններով :

1. Եթէ 8 յօդուածին մէջ նշա-
նակուած պահանջներն ամբողջապէս
վճարուին գլխով և տոկոսով :

2. Եթէ տէրութեան ներքին և
արտաքին պարտույ արժեք զմտտե-
րեալն համար թէ՛ տոյն պայմանագ-
րէն և թէ՛ այս առաւ կայսերական
հրովարտակէն ծաղած ներկայ կար-
գ աղբուրութեան աւելի օգտակար նոր
կարգադրութիւն մը կնքուի կայսե-
րական կառավարութեան և յիշեալ
արժեք զմտտեալով միջոց :

Եթեոր այս երկու պայմանները
լցուին , ներկայ պայմանագիրը պի-
տի շնչուի :

Եթէ ներկայ պայմանագրին ջըն-
ջումն որ և է տարւոյ մ'ընթացքին
մէջ տեղի ունենայ , ներկայ պայմա-
նագրին այն պայմաններն՝ որ չորս
հարկերուն վարձման կը վերաբերին,
մինչև նոյն տարւոյն դեկտեմբերի
վերջը պիտի շարունակին գործադ-
րել :

Եթէ այս պատահականութիւնը
տեղի ունենայ , կայսերական կառա-
վարութիւնը խօսք կու տայ վերոյիշ-
եալ վարձակալաց վճարել :

1. Պայմանագրով չլրացած պայ-
մանագրովք բռնուած պաշտօնատա-
րաց բանեկըք ամսականները :

2. Կանոնաւոր թուղթերով ար-
գարացեալ ուրիշ արտաքին կարգի
ծախքերը :

Ստիպելով վճարքը մէկ տարւոյ
վարձակալութեան գնոյն միանգամ
վճարուած հարկերին երեքը չպիտի
կրնայ անցնիլ :

ՅՕԴ. 14. — Եթէ կայսերական կա-
ռավարութեան և պայմանագրաց մի-
ջև ներկայ պայմանագրին միջնու-
թեան կամ գործադրութեան միայ-
նահամաձայնութիւն մը ծագի , եր-
կու կողմէն անուանեալ չորս իրաւա-
բարաց գաղտնիութեան պիտի յանձ-
նուի , որք , եթէ իրենց ալ կար-
ծիքն հաւատարմութեան ուրիշ վե-
րին իրաւարար մը պիտի բնարեն :

Սոյն գաղտնիութիւնը վճարակն
և անվերաբնեւելի պիտի լինի :

ՅՕԴ. 15. — Ներկայ պայմանա-
գիրը Բ. Դրան կողմէ Կ. Պոլսոյ դես-
պանատանց պիտի հաղորդուի :

Արարեալ կրկին օրինակ ի Կ. Պո-
լսո 10/22 նոյ . 1879 և 7 Ձիւնիս 1885
1297 :

ՅԱՆԵԼԵԱՆ ՅՕԴՈՒՄՆ

Ներկայ պայմանագրին 3 յօդուա-
ծին տրամադրութեանց նկատե-
լով , երկրորդ կողման պայմանագիրը
յանձն կառնուին մշտնջենաւոր կեր-
պիւ հոգ տանել կառավարութեան
ամեն ազահանքաց և աղի մթերա-
նոցաց մէջ հասարակաց սպառման
հարկաւոր եղած աղը պատրաստ պա-
հելու , այնպէս որ մասնաւորք և տե-
ղական արհեստաւորք և աղալա-
ճառք աղի մթերանոց մը դիմած
ժամանակին կարենան միշտ իրենց
պէտք եղած աղը գնել , ի բաց առ-
եալ այն պարագայն , ուր անդիմադ-
րելի պատճառաւ մը աղին արտադ-
րութիւնն արգելուի կամ պատրաստ
դանուած աղը շնչուի :

ՀԱՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 17 դեկտ.
Կալիֆոռնիայէն այս իրիկուն եկած հե-
ռագիր մը կը ծանուցանէ թէ Կալիֆ-
ոռնի լրագիրը խորհուրդ կուտան կա-
ռավարութեան , որ Աֆրիկայի մէջ
իրաց վիճակին ծանրութիւնը ճանչելով
արագապէս և ազդուապէս դործէ : Սա-
կայն փոխարքայն յայտարարութիւն մը
հրատարակեց , որուն նախելով իրաց վի-
ճակը ծանր անհաճոյսութիւն տալու
բան մը չունի :

Աֆրիկայի մէջ ապստամբութեան
գլուխն է Ֆարաքի Միր-Աֆրալ խանն ,
որ բնաւ յարաբերութեան մտած չէր
Ռօպէրթս զօրավարին հետ , մինչդեռ
միւս ամեն կառավարիչը հոյատաւոր տը-
րամադրութեան ցոյց տուեր էին :

Անգղիացիք Հէրաթի էյուսոյ խանին
վրայ ալ չեն կրնար վստահիլ , որ դեռ
իւր միտքն յայտնելու և Անգղիոյ իշխա-
նութիւնը ճանչելու հրաւերին չէ պա-
տասխանած :

Գաղտնի Անգղիական դորաց Հընդ-

կատանի հետ յարաբերութիւնը կորը-
ւած է . բայց մինչև յիշեալ լիւրագրա-
հաղորդակցութեան զիծը բաց է , և լաւ
պահպանուած : Այս կողմի բնակիչք
Անգղիացեաց գրաւուելն չի թափան շահ
տեսնելով , թշնամութիւն մը չվարցուի :

Անգղիոյ ազատական կուսակցութեան
անդամներէն մի քանին իմացուցին իր-
ւանտայի երեսփոխանաց թէ իրանտայի
համար միակ միջոց մը կայ ազարակային
խնդրոյն զոհացուցիչ լուծում մը ձեռք
բերելու , այն է Անգղիացի և իրանտա-
ցի ազատականաց համաձայնութիւնն ,
որով յիշեալ խնդրին ոչ միայն իրանտա-
յի՝ այլ և Անգղիոյ համար ալ կրնայ լուծ-
ուիլ :

Պերլին 17 դեկտ.
Եթէ Յուստատի սահմանադրին
խնդիրը տէրութեանց միջնորդութեան
յանձնուի , կարծիք կայ թէ այս խնդիրը լու-
ծելու կոչուող դեսպանատնիւրը Պեր-
լին պիտի գումարի :

Պուրէշ 17 դեկտ.
Արտաթագաւորի միջազգային յանձ-
նախորհուրդն երկու տեղեկագիր շինած
լինելով , մին մեծ մասէն և միւսը փոքր
մասէն ստորագրեալ , տէրութիւնք որո-
շեցին Կ. Պոլսոյ դեսպանաց խորհրդին
յանձնել այս խնդիրը :

Լոնտոն 18 դեկտ.
Կալիֆոռնիայէն այս առաւօտ եկած հե-
ռագիր մը կը ծանուցանէ թէ Ռօպէրթս
զօրավարին հետ հեռագրական հաղոր-
դակցութիւնը կորուած է : Հէրաթի
զօրքերն էյուսոյ խանը բանտարկեցին և
նոր կառավարիչ մը գրին :

Այս առաւօտ հեռագիրէր

Վիէննա 18 դեկտ.
Աւստրիական և Հունգարական պատ-
ուիրակութեանց նախագահներուն պա-
տասխանելով , կայսրն հաստատեց թէ
ամեն տէրութեանց հետ Աւստրո-Հուն-
գարիոյ յարաբերութիւնները բարորակ
բարեկամական են . յարեց թէ Աւստրո-
Հունգարիոյ և Գերմանիոյ միջև կեցող
մտերմական յարաբերութիւնը ընդհա-
նուր խաղաղութեան համար նոր երաշ-
խտութիւնն ունի , և յայտարարեց
թէ Պերլինի դաշնագրին ամբողջապէս
գործադրութիւնը Պաղատանց թերակըզ-
ւոյն վերջնական խաղաղացումը յառաջ
պիտի բերէ :

Լոնտոն 18 դեկտ.

Օրմ. Բան.	9 1/2
Փոս.	1865 42
»	1869 11 7/8
»	1871 50 3/4
»	1872 47 1/2
»	1873 40 4/4
» Կ. Պոլս.	78 1/4
Անգլ. Բան.	97 1/4

Փարիզ 18 դեկտ.

Օրմ. Բան.	9,83
Գաղլ. »	5 0/0 114,77 1/2
» Բան.	5 0/0
» »	» 85,40

Տաղ

5. « Իսկ թիկաւորան ի դադարման
Ունի զվեղար սեւագունեան » :
Ստեփաննոս Լատիներէն կը գրէ
Արքեպիսկոպոս , որ կը նշանակէ սեւա-
գուն : Լատինեան Հ. Սրապիւն Գաղղ-
իւնք թուշուրը Հայերէն կ'անուանէ
թիկաւոր , ՏՃ. Պաշտապա . ևս կար-
ծեմ թէ Միշտ մեր նախնեաց երա-
ժըշտական կոչումը թուշուրն է , ու-
րոյ մէկ տեսակն Գաղղ. կըսուի « քը-
ուօք-պաշտ » և Հայերէն մեղաւաքար :

Տաղ թուշ .

6. « Իսկ լիսեռնին իւր խնդար
Տաղ զվիդն ի շուրջ ինքն անդադար »
Ստեփաննոս կը բացատրէ . « Հաւ-
որ զպարանոցն շրջընէ , զկուռ նը-
ման օձի ունի , զոր հանէ և յետ
քարշէ ի մէջ կուռցին , Լատիներէն
Դիւք-իւն » :

Տաղ թուշ .

7. « Խաղաղութիւն շարժէր զոգ ին » .
Ստեփաննոս կը բացատրէ . « Թըռ-
ռ » :

ՆԵՐՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Գըրշէհըն նախարգ կառավարիչ
Մէհմէտ փաշան Մշոյ կառավարիչ ,
Իսլիմիէն նախկին կառավարիչ
Հայտարար պէյ . Գէօթահայի կառա-
վարիչ անուանեցան :

Հայէպի նախարգ Առաջին Բովի-
սէր Մազհար փաշան՝ գաղթական-
նաց դեռնիւմն և անդեռն հակերու
պաշտօնով կաղմեալ նոր յանձնախմբ-
րի մը նախագահ անուանեցաւ :

Վերաբնութեան տեսին (իսթի-
նաֆ) քով Հէյէթի-Իթիհատիէն ա-
նունով Ամբաստանութեան ատեա-
նը հաստատեցաւ . ընդ նախագահու-
թեամբ Պէրիէ Էֆէնտիի և երեք
անդամէ բաղկացեալ , որոց մին է
Եուսուֆեան Տիգրան Էֆէնտի , որ
ինչպէս արդէն ծանուցած եմք՝ թի-
ճարէթի ժողովին անդամութեան է-
լած էր :

Եուսուֆեան Տիգրան Էֆէնտի
միանգամայն վերաբնութեան ատե-
նին անդամ անուանած է :

Վաղըթ ի լրոյ կը ծանուցանէ
թէ երէկ Կուսիսիէի շրջակաները կը-
ռիւ սկսեալ է (Պէտք չէ սակայն մոռ-
նալ թէ Վաղըթ , քանի մ'օր առաջ
միւսնոյն տեղը 10,000 Գարատաղցւոյ
բանակ մը շարքած էր :

Փիլիպէն երէկ եկած հեռագիր
մը կը ծանուցանէ թէ Արեւելեան
Բուլղարի թշուառ Մահմետականաց
և Քրիստոնէից օգնութիւն ընելու
համար տեղւոյն բոլոր հիւպատոս-
ներէն և Պուլըար , Յոյն և Իսլամ ե-
րեւելիներէ բաղկացեալ յանձնախմբ
մը կազմուել է ընդ նախագահու-
թեամբ Պուլըարաց Էփարիին :

Վաղըթ իւր այս առաւօտեան
թուղթ մէջ կը ծանուցանէ թէ Կու-
սիսիէի գործին համար Բ. Դրան քով
հաւաքական ձեռնարկ մ'ընելու ա-
ռաւարկը մերժուած լինելով , Անգ-
ղիոյ առաջարկով թեան համեմատ , որ
փափաք յայտնած էր թէ տէրու-
թիւնը առանձին առանձին գործեն ,
անցեալ ուրբաթ օրը մայրաքաղաքին
Աւստրիական դեսպանատան տեղա-
պահը , կիրակի օրն Անգղիական դես-
պանն , երկուշաբթի օրը Գաղղիական
և Իտալական դեսպաններն , երեք-
շաբթի օրը Ռուսիոյ և Գերմանիոյ
դեսպանատանց տեղապահները Բ.
Դրան երթալով , արտաքին գործոց

չուն որ դատուն միշտ շարժէ . Լա-
տիներէն « Մօդալիլա » . Այս թուշու-
նը Գաղղ. կըսուի « Հօշ-քէօ » կամ
« Պէռ-քէօ » . ՏՃ. « Գուլըուդ սալ-
լայան » :

Տաղ թուշ .

8. « Իսկ Կարմալ հաւուկն որ կայ ,
Կարմիր կոցաւ վառեալ է նա »
Ստեփաննոս կը գրէ Լատիներէն
« Բօռֆիլիս » , որ է կարմիրկոց
կարմրապուն թուշուրն մը :

Տաղ թուշ .

9. « Սաղն ի յարօտ երթայր և վայր »
Տաղ թուշ .
10. « Սաղմըն՝ գայր իրբե զկաքաւ
Պէսպէս ոտիւք զարգարանաւ »
Ստեփաննոս կը բացատրէ . « Հաւ-
սակաւ ինչ մեծագոյն քան զկաքաւ ,
որոյ քամակն պէսպէս պուտս սնի-
մին է խիստ համեղ . Լատիներէն
« Սաղմէն » : Այս թուշուր Գաղղ .
կըսուի « Ֆրանքօն » :
« Մանթիլ թիւնք » Լի . տան մէջ

ԲԱՆԱԿԱՆԻՆԻՆ
ՅՈՎՀԱՆՆԵՍ ՎԱՐԳԱՊԵՏԻ
ՏԱՂ ԹԻՉՆՈՅ
ՀԱՆԵԱԼ Ի ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆԷ
ԳՐԱՊՐԱՅ
Յ. Յ. ԱՆՏՈՆԵԱՆ ՀԱՐՑ ԵՐԹԱՐԷՐԸ
(Շար. տես թիւ 2481)

Հետեւեալ տողերն որ կը գրու-
նան նոյնպէս Ստեփաննոս բառա-
րանին մէջ , թէ ինչուաւ և թէ՛ ու-
սանաւորին շինարարն մեծ նմանու-
թիւն ունին Յովհաննէս վարդապե-
տի տաղին հետ , և թերեւ Գ. Թ. Գ.
աներուն մասն ըլլան որ Անտոնեան
հարց օրինակին մէջ չեն դառնուի ,
հետագային թուղթ ինկած ըլլալուն
պատճառաւ :

1. « Աղաւան ոտիւք քարէր զգեալին ,
Գուռայր ձայնիւ զվաղն իւր դարձին »
Այս երկու տողերս կը յիշուին

Ի Բաշալէպէն , ևս չկրցայ գտնել ըս-
տեփանեան բառարանին մէջ :

Տաղ թուշ .

2. « Արտաւտիկն դընէր վեղար ,
Զերթ աբեղայ աղօթարար » :
Այս տեսակ արտայայտն՝ որ գլխուն
վրայ վեղարի ձեռք փետուրներ ու-
նի՝ Գաղղ. կըսուի Գօշ-քէօ . և ըստ մեր
գաղափարացոյ Արեւաճաղ կամ Ա-
բեղուի :

Տաղ թուշ .

3. « Արօսն էր մեծ դերթ ոչխար ,
Զօրն ի դաշտերն շուրջ կուգայր » :
Ստեփաննոս Լատիներէն կը գը-
նէ Արքեպիսկոպոս , որ է Գաղղ. Հէ-
թա ըստած ծովային մեծ թուշուրն . իսկ ըստ Ա-
միրտովթի Ամասիացոյ՝ է Գաղղ. Բ-
թա . ըստած շայլամի նման մեծ
թուշուրն :

Տաղ թուշ .

4. « Գեանարտաւտիկ սիրէ զգեալին »
Ստեփաննոս Լատիներէն կը գրէ
Դիւք-իւն : որ է գեանի վրայ բռնող
տեսակ մ'արտայայտ :

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՇՈՒ

ՀԱՅ ՄԱՏԵՆՈՂՐՈՒԹԵԱՆ

ԵՄԱԿԱՑԱՐԱՆ, ԱՇԽԱՏԱՆԻԿ ԼԵՁՈՒՆ
Հանդերձ. դրական, պատմական, կեն-
սագրական և այլ ծանօթութեամբ:

Աշխատանքային Ա. Պետկոնյան

Աղբյուրն ամենէն նշանաւոր հեղի-
նակաց գործերէն քաղելով պատրաս-
տուած է սոյն հաւաքածոյքն, որ
բայ ի զանազան կարեւոր տեղեկու-
թիւններէ՝ կը պարունակէ նաև Հայ
բանաստեղծներու կենսագրութիւնը,
որոցմէ ոմանք շատերու անձնանունն:

Այսպիսի հաւաքածոյ մը կըր-
նան կարգաւ ամեն կարգի անձինք,
նա մանաւանդ վարժարանաց բարձ-
րագոյն կարգի աշակերտք, որոց
շատ անգամ անհրաժեշտ գրեանք կը
տրուին սերտողութեան:

Այս գիրքը մեծ գիւրութիւն պի-
տի ընծայէ դաստառուաց, որք Հա-
յերէն լեզուի դաստիարակութիւն կը-
նեն դպրոցներու մէջ, միանգամայն
Հայ երկրաստորդներու և ընտանեաց
համար ընթերցանութեան մէկ հա-
տիկ գիրք մը է:

Կեդրոնատեղին է Մարգարեան
գրատուն. կը ծախուի նաև ամէն
գրականութեան և իրավաբան Պողոս
աղայի խանութը, և բերա Պ. Վոլայ-
սի գրատունը. գինն է 10 շաբաթ
արծաթ: Շատ առնողին զեղչ կըլլայ:

ԱԶԴ

ՕՐԱՅՈՅՑ

1880 ՏԵՐ ԵՐԵՄԻԱՅԻ

Գին Մէճիւս գրամ 1 շաբաթ:

ՕՐԱՅՈՅՑ

1880 ԳՐԱՍԻՐԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Գին Մէճիւս գրամ 1 շաբաթ:

ՕՐԱՅՈՅՑ

1880 Ա. ԵՐՈՒՍԱԼԻՄԱՅ

Գին Մէճիւս գրամ 1 շաբաթ:

ԸՆԴԱՐՁԱԿ ՕՐԱՅՈՅՑ

1880 ԶԱՐԳԱՐԵԱՆ

Գին Մէճիւս գրամ 2 շաբաթ:



“Ամառեղութիւն”
ՄԵՏԵՍՒ Ս. Ե. ԱԼԼԵՆԻՆԻՆ
Լեւորհաստի Մաշ Լորդոյը
(MRS. S. A. ALLEN'S WORLD'S HAIR
RESTORER.)

Երբեք չվերադարձնուի Լեւոր
Մաշը իր երկարաւորական գոյնի,
ընծայելով անոր նոր կեանք, աճում,
և փայլուն գեղեցկութիւն: Իր ար-
դիւնքը ստոյգ և կատարեալ է, շուտով
վանդակաւ իրութիւնը: Լեւոր մը չէ:

Միշտ կը հաստատէ ինքնին իբր
մազին բնական ջօրացուցիչը:

Գլխաւոր Միջերանցը (Մաշալան) է,—

114 AND 116 SOUTHAMPTON ROW, Լոնտոն, Լոնդոն:

Կը ծախուի ամէն Լեզոնիստիստիկանի բէն, Լոն Զահա իւզաւա-
ճառներէն, և Լոնդոնի Գեղարվեստներէն:

Կ. Պօլիս Ս. Բանդիւք Եղբայրք քով, Ֆարմաի Պրիմանիք
Բէրա Մեծ փողոց և Էտմընտ Գարիւէնայի քով, Անգ-
ղիական միջերանց, Երեւոյք Գալարըմ Գալարիւս:

ԻՍԿԱՆԻՏԱՐ ԲԱՆՈՂ ԾՈՌԵՆԱԿՆԵՐԸ

Իսկանիստիկանի		Կահանի		Իսկանիստիկանի	
ժամ	ժամ	ժամ	ժամ	ժամ	ժամ
2 30	8 45			8 30	
3	8 35	Պէշիքի		8 50	
3 30	9 40			9 20	
3 50	9 35			10 10	
4 20	10			10 45	
4 30	10 25			11	
5 10	10 45			11 20	
5 40	11 5			11 40	
6 15	11 25			11 50	
6 45	11 40			12 5	
7 20	12				

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Իսկանիստիկանի		Կահանի		Իսկանիստիկանի	
ժամ	ժամ	ժամ	ժամ	ժամ	ժամ
2 30	6 35			6 35	
	8			8	
	8 45	Պէշիքի		8 45	
	9 20			9 20	
3 5	10			10	
3 40	10 30			10 30	
4 15	11			11 5	
5	11 30			11 35	
5 30	12			12 5	
6 5					

ԽՐԱՐԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻԻԹԻԻՃԵԱՆ

Ա. ՈՋՍՏԱՐԱՆԻՆ
ՓԻԼԻՍՈՓԱՅԱՆ ԲԱՌԱՐԱՆ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ

(Փոք)

ՆԱԽԱՐԱՆ

Տեաք Առաջին

Ս. Քենդալ առուի լիւն և Հայ Քենդալաթ
Գրականութիւն և Հայ Մամուլ
ի Կ. Պօլիս

Կը ծախուի բոլոր Հայ գրական-
հաւաքքով, և Պահճէ-Գալու. Զրա-
վաճառ Պօղոս աղայի խանութը:
Գին մէկ զրուշ արծաթ:

ՆՈՒՆԻՐ

Կ. Ս. Ն. Գ. Ի.

Հրատարակող

Նշան Կ. Պէշիքի

Սոյն գրքովը 80 Երեւոյք քաղաք-
եալ և 65 մէծ և փոքր պատկերներ
ով և ծաղկազրկով զարդարուած
է, մարտի ապագայ լիւնուի և ըն-
տիր լիւնուի և խաւարարով կաղ-
մեալ:

Պարզ կազմակերպ զինն է 5 զր-
արծաթ, իսկ ոսկեղօծին զինն 8 զր-
արուն մէջ գաւառուր և գեղեցիկ
պատկեր մալ զտա գրուած է:

Կեդրոնատեղին է Կ. Պօլիս Սու-
լան Համամ Լուստ Եփ. խանութիւն 17,
Պէշիքի Պէշիքիներէն փարագրատու-
նը, նաև Սուլան Համամ թիւ 14
Զարդարեան գործարանը, կամուրջի
զինն սուր Պօղոս աղայի խանութ-
իւն և ամեն Հայ գրականութեան քով:

ՀՐԱՏԱՐԱՆԻՐԻՆԻՔ

ԳՐԱԳՐԱԿԱՆ ԱԿՈՒԳԵՄԻԱ

ՏԱՐԵԿԱՆ ՆԻՍՑ ՀՐԱՊԱՐԱԿԱԿԱՆ

ՀԱՌ

ՊԱՐՈՆ ԺԻՒԼ ՍԻՄՈՆԻ

Տնօրէնի Աղաքեմիային

Թարգմանեաց

Երեւոյք Ս. Առաջին

Կը գտնուի ամեն Հայ գրական-
հաւաքքով և Պահճէ-Գալու Սու-
ճի Պօղոս աղայի խանութը:

Գին 100 փարայ

ԵՐԱՆ ՀԱՅԿԱԶՆ

ԱՐԱՐԲ ԳՐԱԶՆ ՀԱՐԲԱՅ

Գրեց Եսայի Վ. Ղազարեան Աղա-
հանեաց միւրաւ Ս. Կարապետի
Ուխտին Տարածող

Կը գտնուի ամեն Հայ գրական-
հաւաքքով և Պահճէ-Գալու Սու-
ճի Պօղոս աղայի խանութը:

Գին 100 փարայ

ՓԱՐԻՉՈՒ ՏԻԵՋԵՐԱՆԱՆ ԱՐՈՒՆԵՏԱՀԱՆԴԵՍ 1878:

ՃՕՐՃ ԲԲԱՅՈՒ

(George Price)

ՏԻԵՋԵՐԱՆԱՆ ԵՒ ԱՆԸՐԱՂԱՏՆԻ ԵՐԱՊԱՐԱՆԵՐՆԵՐ

ԱՆԳՂԱՅԱԿԱՆ ԱՐԴԱՐԱՆՈՒՐՆԵՐ

(Փօճ—Ձօճ)


Արեւելի և Բաշարի արեւելի Գրեքի Գրեքի Գրեքի

40 Տարեկ աւելի հաստատուած:

NEC PLUS ULTRA

Արեւելի

ԱՐԴԱՐԱՆՈՒՐ ԵՒ ԲԱՆԱԿԱՆԱՆ ԱՆԳՂԱՅԱԿԱՆ



Գործարանային

Կապի և վառարի դիմացու
Գործարանային
Կարտոն, ծախի և պատ-
ուղ գործարանային Գրեքի
Գրեքի Գրեքի Գրեքի

Անգլիայ արեւելի Գրեքի և Գրեքի
տան ինչպէս նաև կառավարական բոլոր
գործարաններու և յարկերու յատուկ
ձեռքի ու մատակարարի:
Ցախարան ունեցող, Գրեքի Գրեքի
և այլ մասնաւորաց համար չիւնուած
արկարարներ:

Այն գործարաններ հաճախ արեւելի Գրեքի և Գրեքի
այն ամեն կարգի գրեքի Գրեքի Գրեքի Գրեքի
ներով հաստատուած:
Ճօճ Գրեքի արեւելի Գրեքի Գրեքի Գրեքի
արեւելի Գրեքի Գրեքի Գրեքի

ՍՈՍԿԱԼԻՆԻՆԻՆ

Ի Ռիստ Եսայի

Տեք. — Իմ կարեւորագոյն վերաբեր հոյ ճարտիկ եղան և Գրեքի Գրեքի
հոյճ չէի ոչ Գրեքի և ոչ արեւելի Գրեքի: Արեւելի Գրեքի Գրեքի
ցած ճարտիկ տեղակայութիւն և թղթերու տարածութիւն անհրաժեշտ
մար կարեւորագոյն էր ձեռք:

Ձեռք Արեւելի Գրեքի Գրեքի Գրեքի Գրեքի Գրեքի
ճարտիկ եղան էր. այս վերջինն մէջ գտնուած տեղակայութիւն և կարեւոր թղթ-
թերէն ամենքն ալ այրած էին, միջոցէն ձեռք Արեւելի Գրեքի Գրեքի
բայի տեղակայութիւն և թղթերէն 10 լիւր (որ ըսել է 5 1/2 օրացէն աւելի) փա-
ռօք, Գրեքի արեւելի Գրեքի Գրեքի Գրեքի Գրեքի

Հոյճ Գրեքի Գրեքի Գրեքի Գրեքի Գրեքի
Գրեքի Գրեքի Գրեքի Գրեքի Գրեքի
Գրեքի Գրեքի Գրեքի Գրեքի Գրեքի

Պիս Եսայի

8 արեւելի 1868

Արեւելի Գրեքի Գրեքի Գրեքի Գրեքի Գրեքի
և Գրեքի Գրեքի Գրեքի Գրեքի Գրեքի
Գրեքի Գրեքի Գրեքի Գրեքի Գրեքի